ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՇՄՆ-ԴՇ-24/04

ք.Երևան «18» «01» 2024թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար **Ս.Աթանեսյանի** (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրեն **Ռ.Ալիխանյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), **«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարում»** ծրագրային միջոցառման՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 1155, միջոցառում 11005 (այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **164 366 300 (մեկ հարյուր վաթսունչորս միլիոն երեք հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով: Պայմանագրի գինը ներառում է ԱԱՀ-ի գումարը:

1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի Հավելված №1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաբաժիններով.

2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.

2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը, Պայմանագրի արդյունքների հանձնման և ընդունման կարգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև երկկողմ ստորագրված և հաստատված փաստաթղթով՝ հանձնման-ընդունման արձանագրությամբ (Հավելված №3), նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Պայմանագրի 2.4.4 կետով նախատեսված ժամկետում Կազմակերպությունը իրականացված միջոցառումների հաշվետվության հետ Պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.7. Հանձնման-ընդունման արձանագրությունը Պետական մարմնի կողմից ստորագրվում է, եթե Պայմանագրի արդյունքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և հաստատվում: Նման դեպքում Պետական մարմինը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.8. Պետական մարմինը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպությանն է ներկայացնում իր կողմից ստորագրված և հաստատված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Պայմանագրի արդյունքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.9. Եթե Պայմանագրի 3.8 կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա Պայմանագրի արդյունքը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.8 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված և հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պայմանագրի Հավելված №2-ով հաստատված, տվյալ եռամսակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:

4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները՝

ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.

բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է Պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահամանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.

գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով

4.3. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ Կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման և Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագրով նախատեսված միջոցառումները սահմանված ժամկետում իրականացնելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված իրականացման ենթակա միջոցառումների ժամկետը խախտելու, ինչպես նաև Պայմանագրի 2.4.4 կետով նախատեսված հաշվետվությունները սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում յուրաքանչյուր ուշացված օրվա համար Կազմակերպությունից գանձվում է տույժ՝ իրականացման ենթակա, սակայն չիրականացված միջոցառման գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4. Պետական մարմինը Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարման ենթակա գումարներից:

5.5. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պետական մարմնի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագրի պայմանները տարածվում են 2024 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով հաստատված արդյունքային (կատարողական) ցուցանիշների եռամսյակային (աճողական) համամասնությունները (Հավելված №2) հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Եթե տրամադրվող դրամաշնորհով նախատեսված ծրագիրը և միջոցառումները ենթակա չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

8.4. Կազմակերպությունը մինչև 2025 թվականի հունվարի 31-ը Պետական մարմնին են ներկայացնում տեղեկատվություն 2024 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ստացված դրամաշնորհի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ԱԱՀ գումարների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջե մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ մասի պահանջներին համապատասխան չօգտագործված և ՀՀ պետական

8.5. Պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Պայմանագրի Հավելվածներ №№1-ը, 2-ը և 3-ը համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Շրջակա միջավայրի նախարարություն

ք.Երևան, Կառավարական տուն 3

ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900011007797

ՀՎՀՀ 02507198

Շրջակա միջավայրի նախարարության

գլխավոր քարտուղար

Ս.Աթանեսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

ք.Դիլիջան, Թբիլիսյան խճուղի 2

ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900018003856

ՀՎՀՀ 07610657

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

տնօրեն

Ռ.Ալիխանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված №1
«18» «04» 2024թ. կնքված
№ ՇՄՆ-ԴՇ-24/04 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Ս.Աթանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն
Ռ.Ալիխանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	**Համառոտ բովանդակությունը**	**Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**Վերջնա-ժամկետը**	**Պահանջվող գումարը (դրամ)**
1.	«Դիլիջան» ԱՊ պահպանություն՝	1. Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բամազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն /պաշտպանություն ազգային պարկի ամբողջ տարածքում (33765 հա) Մարդու գործունեության հետևանքով ազգային պարկի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում ազգային պարկի ամբողջ տարածքում (33765 հա)	1. Պահպանության միջոցառումների անցկացում՝ ազգային պարկի աշխատակիցների կողմից տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով:	1.Պատշաճ պահպանության ապահովում:	31.12.2024թ.	143 630 300
		2. Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում: Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց ազգային պարկի տարածքների պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը	2. Հրդեհների կանխարգելում:	2.Հրդեհների նվազեցում		
		3. Հարող բնակավայրերի բնակչության շրջանում էկոլոգիական իրազեկություն:	3. էկոլոգիական իրազեկության նպատակով հարող բնակավայրերի բնակչության հետ հանդիպումների կազմակերպում՝ ապօրինի ծառահատում, որսագողություն, հրդեհների կանխարգելում թեմաներով:	3.Հանրության իրազեկության մակարդակի բարձրացում, 9 միջոցառում, մասնակիցների թիվը 400		
		4.«Դիլիջան» ազգային պարկի տարածքում գարնանային և աշնանային ստուգողական ստուգումների իրականացում	4. Պարկի ողջ տարածքում աշխատակիցների կողմից ստուգումներ:	4.Գարնանային հերթական, արտահերթ և ստուգողական ստուգումների վերաբերյալ հստակ և ճշգրիտ տեղեկատվություն:		

2.	«Դիլիջան» ԱՊ գիտական ուսումնասիրություններ	«Դիլիջան» ազգային պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության գենոֆոնդի, բնության ժառանգության ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի միջոցառումների իրականացում: Գիտական միջոցառումների հաշվետվությունների թիվը 1 (մեկ)	Ազգային պարկի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալների ձեռք բերում, ուսումնասիրությունների իրականացում	Ազգային պարկի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալների վերլուծությունների առկայություն	31.12.2024թ.	20 736 000
	1.ԴԱՊ-ի կենսաբազմազանության բազայի տվյալների, շարունակական հավաքագրման / թարմացման աշխատանքներ/	Կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների հավաքագրում	ԴԱՊ-ի բոլոր տեղամաս-մասնաճյուղերում ֆոտոթակարդների տեղադրում, դիտայցերի և ուսումնասիրությունների իրականացման աշխատանքներ՝ կենսաբազմազանության տեսակային կազմի մոտավոր թվաքանակի, պոպուլյացիաների տարածվածության և դրանց փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն ունենալու նպատակով:	Բազայում կենսաբազմազանության և դրանց փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն	31.12.2024թ.	
	2. «Դիլիջան» ազգային պարկի գիշատիչների /Carnivora/ կարգից՝ գորշ արջի/ Ursus arctos / և երկկճղակավոների /Cervidae/ կարգից՝ այծյամի մոնիթորինգ՝ տեսակների ապրելավայրերի, թվաքանակի և միգրացիոն ուղիների վերաբերյալ: 2021-2024թթ ընթացքում հավաքագրված տվյալների վերլուծություն	Թիրախային տեսակների ապրելավայրերի, թվաքանակի և միգրացիոն ուղիների վերաբերյալ մոնիթորինգի իրականացում	Շրջայցերի ժամանակ ընտրված և աշխատակիցների կողմից նախապես նշված հատվածներում ֆոտոխցիկների տեղադրում, ինչպես նաև դաշտային ուսումնասիրությունների իրականացում: 2021-2024թթ ընթացքում հավաքագրված տվյալների վերլուծություն	Թիրախային տեսակների գլխաքանակի ապրելավայրերի, թվաքանակի և տեղաշարժման վերաբերյալ հստակ տեղեկատվություն: Տվյալների վերլուծություն	31.12.2024թ.	
	3. «Դիլիջան» ազգային պարկի տարածքում, << Բույսերի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող, խոլորձազգիների/Orchidaceae/, հիրիկազգիների /Iridaceae/, շուշանազգիների /Liliaceae/ ընտանիքներին պատկանող բույսերի ուսումնասիրություն և մոնիթորինգ:	Դիտայցեր: Բույսերի աճելավայրերի, զբաղեցրած արեալների, Կարմիր գրքային տեսակների վերաբերյալ ուսումնասիրության իրականացում: Նմուշների հավաքում և հերբարիումների պատրաստում	Ազգային պարկի բոլոր տեղամաս-մասնաճյուղերում շրջայցերի և դիտարկումների իրականացում, ուսումնասիրություններ՝ նշված բույսերի պոպուլյացիաների, դրանց տարածվածության և առանձնահատկությունների վերաբերյալ	Նշված բույսերի տեսակային կազմի, պոպուլյացիաների, դրանց տարածվածության և առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվություն	31.12.2024թ.	

	4. «Դիլիջան» ազգային պարկի մերձալպյան գոտիների էկոհամակարգերի ուսումնասիրություն և 30 անուն բուսատեսակներից հերբարիումների պատրաստում	«Դիլիջան» ազգային պարկի մերձալպյան գոտիների, կենսաբազմազանության ուսումնասիրություն, փորձահրապարակների տեղադրում, տեսակային հարստության գնահատում, բուսատեսակների հերբարիումային նմուշների հավաքում, պատրաստում	Մերձալպյան գոտիներում շրջայցերի, դիտարկումների, կենսաբազմազանության ուսումնասիրություն, տվյալների, բուսատեսակների նմուշների հավաքման աշխատանքների իրականացում	Մերձալպյան գոտիների ուսումնասիրություն, տեսակային հարստության գնահատում, դիդակտիկ նյութերի, նմուշների պատրաստում: Հասարակության իրազեկվածության բարձրացում	31.12.2024թ.	
	5. Թեյերի և թուրմերի համար օգտագործվող 5 անուն բուսատեսակների հավաքում և փաթեթավորում 120 հատ	«Դիլիջան» ազգային պարկի տարածքից թեյերի, թուրմերի պատրաստման համար օգտագործվող բուսատեսակների հավաքման և փաթեթավորման համար նախապատրաստման աշխատանքներ:	Բույսերի աճելավայրերին, պոպուլյացիաներին առանց վնաս հասցնելու բուսատեսակների հավաքման, չորացման և փաթեթավորման համար նախապատրաստման աշխատանքներ	Ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոնում վաճառքի իրականացում, հավելյալ ֆինանսական մուտքեր, բնապահպանական, միջոցառումների ժամանակ, որպես պարկի պրոդուկտ կիրառում	31.12.2024թ.	
	6. «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանության վերաբերյալ ճանաչողական ուղեցույց - գրքույկի տպագրում /100 օրինակ/ Երկլեզու / հայերեն, անգլերեն/	Կենսաբազմազանության վերաբերյալ /կենդանիներ, բույսեր, սնկեր / տպագրական նյութերի և տեղեկատվության հավաքագրում	Ազգային պարկի բոլոր տեղամաս-մասնաճյուղերում շրջայցերի և դիտարկումների իրականացում, մոնիթորինգ: Գրքույկի տպագրման համար նյութերի հավաքագրում:	Գրքույկի միջոցով հասարակության իրազեկվածության բարձրացում:	31.12.2024թ.	
	7. էկոկրթական, ճանաչողական, դասընթաց - սեմինարների, արշավների իրականացում ուս. հաստատությունների սաների, էկոխմբակների, արշավային խմբերի համար	Սահապատկերների մշակում, սեմինար-դասընթացների, արշավների իրականացում, արդի կրթական ծրագրերին և չափորոշիչներին համապատասխան:	Բնապահպանական , էկոկրթական, ճանաչողական, դասընթաց – սեմինարների, արշավների կազմակերպում տարբեր ուսումնական հաստատությունների սաների, էկոխմբակների, արշավային խմբերի համար:	Սահապատկերների մշակում, սեմինար-դասընթացներ, արշավներ,	31.12.2024թ.	
	8.ԴԱՊ-ի առավել ակտիվ ռեկրացիոն գոտիների և էկոերթուղիների առկա իրավիճակի գնահատում, մոնիթորինգ: Հուշագրեր ունեցող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ շարունակական համագործակցություն: Հանգստի ձևերի մոնիթորինգ, տվյալների բազայի թարմացում:	Շրջայցերի իրականացում: Հանգստի ձևերի մոնիթորինգ: Համագործակցություն շահագրգիռ կողմերի հետ: Տվյալների բազայի թարմացում	Պարբերաբար շրջայցեր ԴԱՊ-ի արահետներում: Գույքագրում և արահետներում առկա խնդիրների վերհանում: Հանգստի ձևերի մոնիթորինգ և տվյալների շարունակական թարմացում:	Ստացված տվյալների վերլուծություն: «Դիլիջան» ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունների և ծառայությունների մակարդակի բարձրացում: Այցելուների թվի ավելացում:	31.12.2024թ.	

	9.«Դիլիջան» ազգային պարկի քայլարշավային արահետների, պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ թեմատիկ քարտեզ-պաստառի և զբոսաշրջային - տեղեկատվական բուկլետի/գրքույկի/ պատրաստում, տպագրում /երկլեզու՝ հայերեն, անգլերեն / /100 օրինակ/	«Դիլիջան» ազգային պարկի քայլարշավային արահետների, պատմամշակութային հուշարձանների, էկոտուրիստական ենթակառուցվածքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:Նախկինում տպագրված բուկլետի նյութերի թարմացման և նոր, երկլեզու գրքույկի տպագրման աշխատանքներ/հայերեն, անգլերեն/:	«Դիլիջան» ազգային պարկի քայլարշավային արահետների, պատմամշակութային հուշարձանների, էկոտուրիստական գույքի և այլ էկոտուրիստական ենթակառուցվածքների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող քարտեզ-պաստառի նախագծման, մախկինում տպագրված բուկլետի նյութերի թարմացման և երկլեզու տպագրման աշխատանքներ/հայերեն, անգլերեն/:	Գրքույկի միջոցով հասարակության իրազեկվածության բարձրացում:	31.12.2024թ.	
	10.«Դիլիջան» ազգային պարկի արգելոցային գոտիների սահմանային հատվածներում տեղեկատվական ցուցանակների պատրաստում և տեղադրում /Յուրաքանչյուր տեղամասում՝ 5 հատ/	«Դիլիջան» ազգային պարկի արգելոցային գոտիների սահմանային հատվածներում տեղեկատվական, նախազգուշացնող ցուցանակների պատրաստում և տեղադրում ըստ տեղամասերի: Յուրաքանչյուր տեղամասում՝ 5 հատ	Պարբերաբար շրջայցեր արգելոցային հատվածներում, սահմանների վերաբերյալ տվյալների հստակեցում , ցուցանակների համար նյութերի հավաքագրում,պատրաստում, ցուցանակների տեղադրում:	Արգելոցային գոտիների սահմանազատում: Իրազեկվածության բարձրացում:	31.12.2024թ.	
	11. ԴԱՊ-ի դեգրադացված /արածեցում, անառահատումներ/ տարածքների մոնիթորինգ:	Շրջայցեր, դիտայցեր: Դեգրադացված հատվածների հայտնաբերում, դրանց վերաբերյալ տվյալների հավաքագրում:	Դեգրադացված տարածքների վերաբերյալ նյութերի հավաքագրում և վերլուծություն:	Դեգրադացված էկոհամակարգերի վերականգմանն ու բարելավմանը միտված միջոցառումներ:	31.12.2024թ.	
	ԸՆԴԱՄԵՆԸ					**164 366 300**

Հավելված №2
«18» «04» 2024թ. կնքված
№ ՇՄՆ-ԴՇ-24/04 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Ս.Աթանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն
Ռ.Ալիխանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեով հաստատված արդյունքային (կատարողական) ցուցանիշների եռամսյակային (աճողական) համամասնությունները

Ծրագրի դասիչը՝	**1155**	**Ցուցանիշներ**			
Միջոցառման դասիչը՝	**11005**	**Առաջին եռամսյակ***	**Առաջին կիսամյակ**	**Ինն ամիս***	**Տարի**
Միջոցառման անվանումը՝	«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների կատարում				
Նկարագրությունը՝	«Դիլիջան» ազգային պարկի տարածքում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացում				
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում				
Միջոցառումն իրականացնողի անվանումը՝	Մասնագիտացված կազմակերպություններ				
Արդյունքի չափորոշիչներ					
ՊՈԱԿ-ի տնօրինության՝ ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանվող տարածք, հա			33765		33765
Գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվությունների թիվը, հատ			2		4
Նախարարության կայքում հրապարակված գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվությունների թիվը, հատ			2		4
Բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումների թիվը, հատ			6		12
Էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումներին մասնակիցների թիվը			300		500
Խախտված էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված միջոցառումների թիվը, հատ			2		6
էկոերթուղիների սպասարկան աշխատանքների իրականացում, երթուղիների թիվը, հատ			25		25
Դրամաշնորհային պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման մակարդակը, տոկոս			0		100
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		**27 449.2**	**73 964.8**	**115 056.4**	**164 366.3**

* Առաջին եռամսյակի և 9 ամիսների հաշվետվություններում արդյունքային չափորոշիչների համար «Հաշվետու ժամանակահատվածի պլանային (ճշտված) և փաստացի ցուցանիշների տարբերությունը» սյունակը չի լրացվում, իսկ «Տարբերության պատճառը» սյունակում ներկայացվում են միայն այն ցուցանիշների բացատրությունները, որոնց գծով հաշվետու ժամանակահատվածում առաջացել են ռիսկեր առաջիկա հաշվետու ժամանակահատվածի համար հաստատված արդյունքային ցուցանիշների չկատարման կամ մասամբ կատարման գծով: Հաշվետու ժամանակահատվածի համար լրացվում է «Փաստացի ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածում» սյունակը:

Հավելված №3
«18» «01» 2024թ. կնքված
№ ՇՄՆ-ԴՇ-24/04 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Շրջակա միջավայրի նախարարություն	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Դիլիջան, Թբիլիսյան խճուղի 2
ՖՆ գործառնական վարչություն	ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011007797	ՀՀ 900018003856
ՀԿՀՀ 02507198	ՀԿՀՀ 07610657

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2024թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր***

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «18» «01» 2024թ.

Պայմանագրի համարը՝ ՇՄՆ-ԴՇ-24/04

Պետական մարմինը՝ ի դեմս գլխավոր քարտուղար Ս.Աթանեսյանի և Կազմակերպությունը՝ ի դեմս «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Ռ.Ալիխանյանի, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը «___» «_____» 2024 թվականից մինչև «___» «_____» 2024 թվականն ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ միջոցառումները.

№	Իրականացված միջոցառման						
	անվանումը	համառոտ բովանդակությունը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները		քանակական կամ արդյունքային ցուցանիշները		Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի	

ՀԱՆՁՆԵՑ	ԸՆԴՈՒՆԵՑ
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.